

2584

*D. G. ...*

*... ..*

*... ..*

244  
b-56

1883

*4. (D) ...*

244

Ճ-56 ՃԷՍԻԳԱՅԻ

## ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՒԲԸ

معارف عمومه نظارت جلیله سنک رخصتیه  
۲۱ جایزى الاخر ۳۰۰ و ۱۶ نيسان ۹۹ نومرو ۱۴۸  
مصارف آمریقان مسیونر شرکتي طرفندن تسویه اولندرق

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՓԱԶԵԱՆ

1883



38629.67

2012

2001

52154-4.7.



ՃԷՍԻԳԱՅԻ

## ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՒՔԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՐՃԱՐԱՆ ԵՒ ՍՐՃԱՐԱՆԻՆ ՏԵՐԸ

Համեստ և իւր գործին մատուցող անձ մը որոյ անունը և բնակութիւնն անձանօթ էր, վասն զի դուն ուրեք ընտելութիւն և հաղորդութիւն ունէր ուրիշներու հետ, սրճարան բացած էր Լոնտոնի փողոցներէն մէկուն մէջ ուր բարձր կամուրջ մը կայ:

Չմերուան մէջ օր մը առաւօտուն սրճարանին դուռը եկաւ ազքատ ազլիկ մը, բայց յիշեալ անձը շատ զբաղեալ ըլլալով միտ չբռնու անոր: Ազլիկը կը նայէր սուրճին և ջութերուն (փիտէ) որ շարուած էին սրճարանին մէջ: Զգեստներն էին հին և պատառատուն, աչուրները սև և պայծառ, և երկայն ու խիտ մազերը խառն ի խուռն թողուած կ'իջնէին ուսերուն վերայ: Ազլիկը մանուկ էր հասակաւ, բայց մարմնով նիհար, և վասն զի բոկոսն էր, կ'երեւար թէ շատ կը մտէր, ուստի և ոտուրնե-

րուն մերթ մին և մերթ միւսը վեր առնելով կը գնէր միւսին վրայ : Սուրճին և շօթերուն նայեցաւ այնչափ , որ աչուրներն սկսան անօթի անասնոց աչուրներուն պէս փայլիլ , նաև երեսէն յայտնի էր անօթութիւնը : Յետոյ աւելի մօտ գնաց սուրճին անոյշ հոտն աւելի մօտէն առնելու : Անասեն սրճարանին տէրը տեսաւ զնա , բայց դուրս չըբաւ , դարձեալ իւր գործին կը զբաղէր . իսկ աղջիկն աչքը շօթերուն տնկած՝ կը լիզէր շրթունքը :

Սրճարանին տէրը սովոր էր , առաւօտուն եկող , յաճախորդներուն մեկնելէն ետքը , շուտով ամանները ժողվել և խանութը դոցելով տուն երթալ . նաև այս անգամ , երբ յաճախորդք մեկնեցան , սկսաւ երթալու պատրաստուիլ , և այն միջոցին ըսաւ աղջկան մեզմ' ձայնով . «Դուն ալ երթալու ես , շատ կեցար հոս , շուտ ըրէ , գնա՛ :» Աղջիկը պատասխանեց , «Շատ աղէկ , տէր , բայց սաստիկ անձրև կու գայ , և մայրս մեր տանը դուռը կղզած և բանալին առած է : Հոս կենալով սուրճին անոյշ հոտն առնուլ շատ ախորժելի է ինձ , մանաւանդ որ ոտիկանը հոս չնեղեր զիս , և շատ հանդիստ կը զգամ . դիտե՛ս՝ ինչո՞ւ համար ոտիկանը զիս չհալածեր հոս , վասն զի յաճախորդ կը կարծէ զիս :» Այս ըսաւ , և սկսաւ ծիծաղիլ , որպէս թէ կատակ ըրաւ : «Կ'երևի թէ ,» ըսաւ


սրճարանին տէրը , «դեռ բան մը կերած չես :» «Այնպէս է ,» ըսաւ աղջիկը , «մը պիտի գրտնեմ ուտելիք : Դեռ բան մը կերած չեմ , և պիտի մնամ անօթի , մինչև որ կէս օրուան ճաշու համար ուտելու բան մը գտնեմ : Դուն փորձած չես , չես գիտեր անօթութիւնն ինչ է :» Այս ըսաւ և դուրսը երեքոցունելով մեկնեցաւ . բայց այն ինչ տասը քայլ ճամբայ առած էր , սրճարանին տէրը կանչեց զնա : Աղջիկը ետ դառնալով՝ երբ եկաւ սրճանոցին դուռը , սրճարանին տէրը նշանացի հասկցուց անոր վառարանին քով նստարանին վրայ նըստիլ , և ըսաւ . «Առ այժմ հող նստէ , և սա հացի կտորուանքը կեր , քիչ մ'ալ սուրճ տամ , իմէ , բայց ուրիշ անգամ հոս մի' գար . լսեցի՞ր ինչ ըսի , ես մուրացողի ողորմութիւն տալու սովորութիւն չունիմ , և դուն եթէ մուրալու եկած ըլլայիր , հաւատո՛ւ որ իսկոյն ուտիկանով դուրս կը հանէի զքեզ . ի՛նչպէս , հիմա կրակին քով հանգչեցա՞ր :»

Աղջիկը որոյ դեռ բերանն էր սուրճը և հացը , չկրցաւ բան մը ըսել , այլ քաղցրութեամբ կը նայէր սրճարանին տիրոջը երեսը : Սրճարանին տէրը դարձեալ պարապեցաւ իւր գործին , սակայն ատեն ատեն աղջկան նայելով կ'երեքցունէր դուրսը :

Քիչ մը ետքը ըսաւ աղջկան , «Անունդ

ինչ է," բայց իսկոյն, որպէս թէ զղջալով այն հարցումն ընելուն, ըսաւ. «փողոցները թափառող տղոց անունը գիտնալ ինձի ի՞նչ պէտք է» Սակայն աղջիկը չնայելով անոր այս խօսքին, ըսաւ, «Մնունս ճէսիգա է, բայց ուրիշները ճէս կը կոչեն զիս : Եթէ դուն ըլլայիր ճէս, կեանքէդ չէիր ձանձրանար : Ամէն մարդ կ'ըսէ, 'ճէս, սա ըրէ, սա գործը սապէս ըրէ' : Առաւօտէ մինչև երեկոյ ասոր անոր գործին ետևէն կը վաղեմ : 'ճէս, ճէս,' կ'ըսեն, 'տար սա բանն այն ինչ տեղ, այն ինչ տունը,' իսկ վարձքս՝ դաւազան կամ ապտակ է :» «Հոս նայէ, տե՛ս սա," ըսելով, երբ թեք վեր առաւ և տեղ մը ցուցուց որ կաս կարմիր եղած էր, սրճարանին տէրը շարժելով ի գուլթ՝ դարձեալ գլուխ երերցուց : Աղջիկը խօսքը յառաջ տանելով, «Երանի թէ կարող ըլլայի," ըսաւ, «միշտ հոս կենալ. սակայն դուն ահա կը մեկնիս, և չես ուզեր որ ուրիշ անգամ հոս գամ, այնպէս չէ :» «Այո՛," պատասխանեց սրճարանին տէրը, «հոս դալու չես, սակայն քեզի բան մը ըսեմ, եթէ խօսք կու տաս շաբաթ մը չգալ, գալ շաբթու այս օրը կրնաս գալ, բայց մի անգամ միայն. հիմա ե՛լ, գնա :» «Շատ աղէկ, տէր իմ," ըսաւ ճէսիգա, «ահա՛ կ'երթամ, միայն եթէ գործ մը կայ ընելու, հրաման ըրէ, կատարեմ :» Երբ հարցուց, «կրնամ

ամանները տունդ տանիլ," սրճարանին տէրը պատասխանեց, «Ոչ, ոչ, հիմա գնա, և նայէ որ մինչև շաբաթ մը չերևնաս :» ճէսիգա, «Շա՛տ աղէկ, շա՛տ աղէկ," ըսելով գնաց : Քիչ մը ետքը սրճարանին տէրը գոցեց խանութը և գնաց իւր բնակարանը :



### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՃԵՍԻԳԱՅԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

Սրճարանին տէրը կ'ուզէր և կը սպասէր ամէն առաւօտ աղջկան նիհար և դեղնած դէմքը տեսնել, բայց աղջիկը հաւատարիմ մնալով իւր խոստման, ամբողջ շաբաթ մը չերևցաւ, և երբ շաբաթը լրացաւ, առտու մը դարձեալ գնաց լուռ և հանդարտ կեցաւ խանթին առջև, կը նայէր սուրճին և շօթերուն : Այս անգամ դէմքն աւելի աւրած էր, և հանդերձն աւելի մաշած, և ցուրտէն կը դողար սաստիկ :

Երբ յաճախորդները ցրուեցան, սրճարանին տէրը նշանացի կանչեց ներս, և աղջիկը մտնելով նստաւ իւր առաջին տեղը, և իրեն տրուած սուրճով կերաւ նախընթաց օրուրնէ մնացած հացեր. յետոյ այս բարերար մար-

դուն երեսը նայելով՝ հարցուց. — «Մնունդ ի՞նչ է:» «Մկրտութեան անունս», ըսաւ սըրճարանին տէրը, «Դանիէլ է:»

— «Տէր իմ Դանիէլ, ո՞ւր կը բնակիք:»

— «Բաւական է, բաւական է, բնակարանս հարցունել ի՞նչ փոյլթ է քեզ, ես քու տեղը հարցուցի՞:»

— «Մի՛ դժուարիք, տէր իմ, ուղեցի գիտնալ թէ ձեզի պէս բարերար անձ մը ուր կը բնակի: Դուք բարի, շատ բարի մարդ էք, այնպէս չէ՞:»

— «Չեմ գիտեր, թերևս շատ բարի չեմ:»

— «Քաւ լեցի, բարի էք, աղէկ սուրճ կ'եփէք, ձեր շօթերն ևս շատ աղէկ են. ես զձեզ կը գիտէի շատ անգամ, այլ դուք չէիք տեսներ զիս: Այո՛, այո՛, գիտեմ որ բարի մարդ էք:» Դանիէլ կ'ուզէր իւր գործին զբաղիլ, բայց կը խորհէր նաև թէ աղջկան այն գոլխտաններն ի՞նչ կը նշանակէին, և թէ ստուգիւ բարի էր:

«Աղէկ սուրճ կ'եփեմ», կ'ըսէր մտքէն, «ոստիկանը պատճառ չգտներ զիս նեղելու, ասոնք ճշմարիտ են, բայց ստուգիւ բարի՞ մարդ եմ:» Այս խորհելով սկսաւ ստակները համրել, և հառաչեց, առանց պատասխանելու ճէսիգայի:

Քանի մը ըրպէ՛ ետքը գիտամօք մանր ստակ

մը ձգեց գետինը, և որպէս թէ չիմացաւ, գարձեալ զբաղեցաւ իւր գործին, գիտելով թէ ինչ պիտի ընէր աղջիկը:

Ճէսիգա կեցաւ, իբր թէ չաեսաւ ինկած ստակը, և խօսելու ատենը կամաց մը ոտքը երկնցունելով դրաւ ստակին վրայ, և յառաջ տարաւ խօսքը:

Դանիէլ վշտացաւ որ փոխանակ իւր այնչափ երախտեաց, աղջիկը կը ջանար գողնալ ստակը, և փոխանակ գթալով՝ խորհեցաւ յանդիմանել և խանթէն դուրս ընել զնա: Մինչ նա այսպէս կը խորհէր, ճէսիգա կարմրած և արտասուալից, նայեցաւ Դանիէլի երեսը, և խոնարհելով առաւ ստակը գետնէն, և սրբելով տուաւ տիրոջը:

Դանիէլ ծուռ ծուռ նայելով անոր, «Ի՞նչ է այս, ուսա՞ր առիր», ըսաւ: «Այս ստակը ձեռնէ ինկաւ», պատասխանեց ճէսիգա, «և դուք չտեսաք:» Դանիէլ սաստելով ըսաւ. «Ճէսիգա, շիտակ ըսէ, պիտի առնու՞ր ստակը:» «Տէր իմ», ըսաւ աղջիկը լալով, «կենացս մէջ անգամ մը միայն ստակ անցաւ ձեռքս. այս ստակը ոտքիս մօտ ինկաւ, և մինչ դու չէիր նայեր, ծածկեցի զայն ոտքովս, բայց յիշելով երախտիքը զոր ըրիք ինձի՛ թոյլ տալով ինձ ներս մտնել և տաքնալ, սուրճ տալով խմելու, և այլն, զղջացի որ պահեցի ստա-

կը, և ահա յանձնեցի քեզ, բայց հիմա դուն պիտի արտաքսես զիս, և այլ ևս պիտի չլծողուս հոս գալ. . . .”:

Գանիէլ դարձեալ իւր գործին պարապելով, բաւական ժամանակ պատասխան չտուաւ. և ճէսիգա դողալով կայնած էր և կը խորհէր թէ՛ սրճարանը հանդարտ տեղ էր, դուրսը ոչ սուրճին քաղցր հոտը կար, ոչ ուտելու հաց, և ոչ հոգացող մը, այլ միայն ցուրտ հով և հալածում: Մինչ այսպէս կը խորհէր, և կը կարծէր թէ Գանիէլ պիտի վռնտէր զնա, Գանիէլ քաղցրութեամբ, «ճէսիգա» ըսաւ, «եթէ ես քու տեղդ ըլլայի, թերևս չէի ըներ ինչ որ դուն ըրիր. դարձեալ, եթէ կամիս, ամէն շաբթու այս օրս եկու հոս, քեզի սուրճ և հաց կու տամ:» ճէսիգա անոր այս խօսքը տարբեր մտօք առնելով, որպէս թէ ըսել կ'ուզէր, «Եթէ քու տեղդ ըլլայի, ստակը դողնալ չէի մտաբերեր», թէպէտ հրաման առաւ նորէն գալ, զնաց արտմտութեամբ: Բայց Գանիէլ ըսել կ'ուզէր, «Եթէ ես քեզի պէս աղքատ ըլլայի, ստակը ետ չէի տար:» Աղջկան մեկնելէն ետքը, Գանիէլ երկար ժամանակ կեցաւ և կ'ըսէր ստէպ, «Եթէ ես ըլլայի, այնպէս չէի ըներ:»



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՃԵՍԻԳԱ ԿԸ ՏԵՍՆԵ ԶԴԱՆԻԷԼ ՌԻՐԻՇ ԿԵՐՊԱՐԱՆՕԲ

Այս դէպքէն ետքը ճէսիգա դարձեալ շաբաթն անգամ մը կու գար, Դանիելի հայն ու սուրճը կ'առնուր, երբեմն նաև քիչ մը գործ կ'ընէր, Սակայն Դանիէլ չէր ուզեր թոյլ տալ անոր բան մը հարցունել, կամ սորվեցունել անոր իւր տանը ճամբան: Բայց որովհետև ճէսիգա ամենուն կ'ըսէր իւր բնակութեան տեղը, վնասողը կը կրնար դիւրաւ գտնել անոր տունը: Ճէսիգա կը բնակէր զէշ թաղ մը, ախուի մը վրայ, ուր սանդղով մը կ'ելլուէր և ուր քիչ մը յարդէ ուրիշ բան չկար: Ի սկզբան անոր մայրն ունէր քանի մը կտոր կարասի, ինչպէս աման, վերմակ, բայց շատոնց օղիի առած էր զանոնք: Այս կինն այնպէս չար էր որ, եթէ հնար ըլլար, աղջիկն անգամ կը վաճառէր օղիի համար, բայց ճէսիգա մօրը բեռ չըլլալու համար, մտորալով կամ դրացիներու տունը ծառայութիւն ընելով դժուարաւ կը հանէր իւր հայր, յաճախ մօրմէն և դրացիներէն ծեծ ուտելով և նախաահինք լսելով:

Ճէսիգայի Դանիելի հետ առաջին անգամ տեսնուելէն երեք ամիս ետքը, օր մը մայրը գինով տուն կու գայ և անխնայ կը ծեծէ աղ-

Ղիկը : Աղջիկը կը փախչի և լալով փողոցին մէջ պտտելու ասենը կը տեսնէ զԴանիէլ որ քան սովորական ձևը տարբեր հագուած կ'երթար անոր առջևէն : Ճէսիգա չհամարձակեցաւ ձայն տալ Դանիէլի, բայց ետևէն կ'երթար. և երբ Դանիէլ բանալեալ զոր ձեռքն ունէր՝ բացաւ մեծ դուռ մը և ներս մտաւ, ճէսիգա ևս քիչ մը ետքը մտաւ այն դուռնէն, և տեսաւ ընդարձակ եկեղեցի մը, ամէն դին վայելուչ զարդարուած, զետինը ծածկուած ծանրագին գորգով, չորս դին շարուած բազմոցներ որ մետաքսէ և թաւչէ ծածկոցներով և բարձերով զարդարուած էին. մէկ կողմը կար զարդարուն բեմ մը, և բեմին ետին երգեհոն մը, և մէջտեղը և պատերուն վրայ կանթեղներ կախուած էին :

Դանիէլ այս կանթեղները վառելու համար զբաղելով, չտեսաւ աղջիկը, բայց մինչ ճէսիգա հիացմամբ կը նայէր չորս դին, Դանիէլ ըստ պատահման եկաւ անոր քով, և ապշած մնաց երբ տեսաւ որ մուրացկան աղջիկը որուն սուրճ տուած էր՝ հին հանդերձներով եկած էր հոն : «Աղջիկ, այս ի՞նչ է», ըսաւ, «ե՛լ դնա ասկէ, այս տեղ քեզի համար չէ. մաքուր հագուած տիկնայք և հարուստ մարդիկ միայն հոս կու գան, շուտով ել, դնա՛ : Բայց ի՞նչպէս եղաւ որ հոս եկար :» Դա-



նիէլեկեղեցւոյն սպասաւորներէն էր, և որպէս զի ուրիշ մը չլսէր իւր խօսքերը, ցած ձայնով կը խօսէր: Ճէսիգա ըսաւ, «Թողութիւն կ'ընէք, տէր իմ, մայրս զիս ծեծեց, և ես փողոց փախայ, ուր զձեզ տեսնելով, վաղեցի ձեր ետեւէն և հոս եկայ, և ահա ըստ քո հրամանի կը թողում կ'երթամ: Սակայն ի՞նչ գեղեցիկ տեղ է այս, աիկնայք և տեարք հոս ինչո՞ւ համար կու գան, հաճեցէք ըսել, և անմիջապէս կ'երթամ:»

«Հոս աղօթք կ'ընեն», ըսաւ Դանիէլ:

«Աղօթք ի՞նչ ըսել է», հարցուց աղջիկը:

—«Աղօթք ի՞նչ է չե՞ս գիտեր: Ժողովուրդը մէկտեղ կու գայ, ոմանք ծունր կը դնեն, այլք նստած կը խոնարհեցունեն իրենց գլուխը, պաշտօնեայն բեմէն ժողովրդեան իղձը և կարօտութիւններն աղաչանօք կը յայտնէ Աստուծոյ:»

Ճէսիգա մեծ զարմացմամբ դարձեալ հարցուց,

—«Աստուած ո՞վ է, պաշտօնեայ ի՞նչ է, հոս եկող հարուսաները բանի մը կարօտութիւն ունին. ես կը կարծէի թէ անոնք ամեն բան ունին, և աւելի ունին:»

—«Տես, սա բեմ է. քարոզիչը հոն կենարով կը քարոզէ, և ժողովուրդն այս բազմոցներուն վրայ զորս կը տեսնես՝ կը նստի և

քարոզը մտիկ կ'ընէ, եթէ չնիրհեն. և սա՛ երգեհոն է զոր երգի ժամանակ կը հարկանեն: Ահա՛, ամէն բան ըսի: Հիմա գնա, քանզի ժողովուրդը կու գայ, և զքեզ հոս տեսնելով զիս կը յանդիմանէ. ուստի շուտով գնա, և ուրիշ անգամ մի՛ գար հոս, լսեցի՞ր:”

— «Բայց, Դանիէլ, ես այդ բաները բնաւ չէի գիտեր: Չե՞մ կրնար արդեօք սա անկիւնը պահուիլ:”

— «Ո՛չ, ոչ, կարելի չէ, դուն ոչ գլխարկ ունիս և ոչ կօշիկ, քեզի պէս բիրտ աղջիկ մը ի՞նչ պիտի ընենք հոս: Աղօթքի ժամանակը մօտեցաւ, հիմա ժողովուրդը կու գայ, շուտ ըրէ, գնա:” Ճէսիգա հասկցաւ թէ հնար չ'ըր իրեն հոն կենալ, և գնաց դէպ ի դուռը: Դանիէլ բաւական ժամանակ կը նայէր անոր ետեւէն որ գուցէ դարձեալ ետ դառնար: Ճէսիգա երբ դրան մօտ եկաւ, և տեսաւ թէ ժողովուրդը կը սկսէր գալ, և իրեն ճամբայ չկար դուրս ելլելու, դրան ետին պահուեցաւ: Ներս մանողները շատ էին. Ճէսիգա դրան ետեւէն կը լսէր տիկնաց մետաքսեայ հանդերձներուն սեսախներ, և կը տեսնէր թաւշեայ թիկնոցներուն փայլուն երևոյթը: Անգամ մը տիկնոջ մը թաւշեայ թիկնոցը ձեռքով շօշափեց, բայց տիկինը չիմացաւ:

Դանիէլ իւր գործոցն զբաղած էր, բայց

սիրտը նեղացած և միտքն անհանդարտ էր աղջկան համար: Դուռը ելաւ, և փողոցը պտտող ոստիկաններուն կը հարցունէր, «Այս ինչ կերպարանքով աղջիկ մի տեսա՞ք:”

Բայց ճէսիգա դրան ետեւէն էր: Երգեհոնը սկսաւ, և անոր ձայնն այնպէս աղբեց աղջկան սրտին, որ նստաւ և շատ արտասուք թափեց: Յետոյ մտիկ կ'ընէր քարոզչին խօսքերը, բայց բան մը չհասկնալով խորհեցաւ դուրս ելլել, և երբ ոստիկանը որ եկեղեցւոյն դուռը կը կենար՝ քիչ մը անդին գնաց, ճէսիգա ելաւ գնաց:

Ճամբան եկեղեցւոյն փառաւոր զարդերը և ջահերուն լոյսը միտքը բերելով, կը կարծէր թէ դրախտէն արտաքսուեցաւ, և տխրութեամբ գնաց իւր տունը:

### ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՃԵՍԻԳԱ ՀԵՌՈՒԷՆ ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ ԿԸ ՏԵՍԵՆ

Ճէսիգա սորվեցաւ թէ, եթէ եկեղեցին երթալով պահուի դրան ետին, ոչ ոք կ'արգելու զնա, ուստի ամէն կիրակի կ'երթար հոն գաղտ և կը պահուէր դրան ետեւը:

Սորվեցաւ թէ երբ Դանիէլ կը զբաղէր գոր-

ծով, և ոստիկանը ե՛րբ չէր գտնուէր հոն, ուստի ամեն շաբթու կ'երթար և անձայն կը պահուէր դրան ետին: Երբեմն Գանիելի նայելով, և խորհելով թէ անդէտ էր նա իւր հոն դարուն՝ կը խնդար: Վերջապէս ճանչցաւ քարոզիչը և անոր երկու աղջիկները: Երբ այս աղջկանց ներս մտնելով երթալ մաքուր բազմոցներուն վրայ նստիլը կը տեսնէր, կ'ըսէր մտքէն հառաչելով, «Մյս աղջիկներն ի՛նչ կ'ընեն նստելով այն բազմոցներուն վրայ, ուր ինծի պէս աղտեղի աղջիկ մը կարող չէ երթալ նստիլ:»

Գանիել որ ճէսիգայի եկեղեցին երթալը չէր գիտեր, հանգարտ սրտով կը ղբաղէր իւր գործին: Բայց երբ օրերը երկնցան, և պաշտօնն սկսաւ կատարուիլ փոխանակ գիշերուան ցորեկը, դժուարին եղաւ ճէսիգայի գաղտ մտնել և պահուիլ. բայց տեղի չմնաց այս դժուարութեան, դաղանիքը յայտնուեցաւ սա կերպով: Օր մը մինչ քարոզչին աղջիկները կանուխկեկ կ'երթային եկեղեցին, ճամբան տեսան որ աղքատ աղջիկ մը պատուաժ և աղտոտ հանդերձներով եկաւ մտաւ եկեղեցին, և զայս տեսնելով զարմացան, և երբ ներս մտան, տեսան որ աղջիկը դրան ետին նստած էր: Երբ քարոզչին աղջկանց մին ըսաւ միւսին, «Կեցի, երթամ կանչեմ գրանիէլ:»



Ճէսիգա ոտք ելլելով, «Ն'աղաչեմ, զթա՛»,  
 րսաւ, «զիս վռնաել մի՛ տար, ես աղքատ աղ-  
 ջիկ եմ, աշխարհիս վրայ այս տեղէն ուրիշ  
 վայելելու բան մը չունիմ: Շատ անգամ կը  
 տեսնէի որ այն երկայնահասակ անձին հետ  
 կու գայիք այս եկեղեցին, բայց չէի կարծեր  
 երբէք թէ վռնաել պիտի տար զիս այս տե-  
 ղէն: Ես հոս կենալով մարդու փնաս չեմ տար,  
 սակայն եթէ Գանիէլ իմանայ, այլ ևս սուրճ  
 չտար ինձի:» Երբ այս լսեց քարոզչին մեծ աղ-  
 ջիկը, «Խեղճ աղջիկ», րսաւ, «մենք քեզի փնաս  
 չենք տար, կ'ուղենք հասկնալ միայն թէ ին-  
 չո՞ւ համար եկած և պահուած ես այս դրան  
 ետին:» Ճէսիգա պատասխանեց, «Ես նուա-  
 գարան մտիկ ընել շատ կը սիրեմ, և կը փա-  
 փաքիմ սորվիլ թէ ի՞նչ է Աստուած, ի՞նչ է  
 ազօթք: Արդարև ձեզի պէս անձանց համար  
 շինուած է այս տեղը. ես փափաքեցայ գոնէ  
 անգամ մը ներս մտնել և տեսնել թէ ինչ  
 կ'ընէք հոս:» Անտուն քարոզչին փոքր աղ-  
 ջիկն րսաւ ճէսիգայի. «Եկու, նստէ մեզի հետ:»  
 Բայց անոր մեծ քոյրը ճէսիգայի հանդերձին  
 նայելով, չհաճեցաւ, սակայն միւսը բանալով  
 Աւետարանը զոր ունէր ձեռքը, ցուցուց սա  
 համարները քրոջը. «Քանզի թէ որ ձեր ժողո-  
 վոյն մէջ մարդ մը մտնելու ըլլայ որ ունենայ  
 ոսկի մատանի և փառաւոր հանդերձներ, հոն


աղքատ մ'ալ մաներու ըլլայ աղտոտ հանդերձ-  
ներով, և նայիք անոր վրայ որ փառաւոր հան-  
դերձներ ունի, և ըսէք թէ Դուն հոս նստէ  
պատուով, և այն աղքատին ըսէք թէ Դուն  
հող ոտքի վրայ կայնէ, կամ թէ Եկուր նստէ  
պատուանդանիս քով, ձեր մէջ խորութիւն-  
ներ ընող և չար խորհուրդներու դատաւոր  
չէք ըլլար” (Յակ. Բ. 2-4): Բայց մեծ քոյրը  
դարձեալ ըսաւ, “Հիմա ես չեմ գիտեր թէ  
ինչ ընեմ, Գիրքին հրամանը պարզ է, սակայն  
ատենէնք մեր հայրը կը հաճի՞ որ այսպէս ը-  
նենք: Նախ եկեղեցւոյ սպասաւորին հարցու-  
նենք:” Ճէսիգա երբ լսեց զայս, “Կ'աղաչեմ,  
կ'աղաչեմ,” ըսաւ, “Դանիելի մի՛ իմացունէք,  
ուրիշ անգամ չեմ գար, ստուգիւ չեմ գար,  
զիս թող տուէք, խօսք կու տամ որ այլ ևս  
չաշխատիմ գիտնալ թէ ինչ է Աստուած և  
ինչ է աղօթք:”

Անտառն մեծ աղջիկը քաղցրութեամբ ըսաւ  
անոր, “Եթէ Աստուծոյ վրայ տեղեկութիւն  
չունիս, քեզի սորվեցունել մեր պարտքն է .  
մեր հայրը քարոզիչ է, եթէ կամիս, մեզի  
հետ ներս եկու, և հարցունենք մեր հօրը թէ  
ինչ ընելու ենք:”

—“Դանիել կը տեսնէ՞ զիս:”

—“Հօրմէս ուրիշ մարդ չկայ անոր սենեկին  
մէջ:”

Անտառն ճէսիգա ըսաւ, “Եթէ այդպէս է,  
չեմ վախնար, կու գամ,” և երեքն ի միասին  
երթալով քարոզչին սենեակը՝ զարկին դուռը,  
և երբ ներսէն ըսուեցաւ, “Հրամայէք,” մտան  
ներս:



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՃԵՍԻԳԱ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ

79-62985

Օրիորդք երբ սենեակը մտան, քարոզիչը  
կրակին քով նստած գիրք մը կը կարդար: Էր  
մարմնով նիհար, բայց սրատես և խոհուն:  
Ուշադրութեամբ ճէսիգայի նայեցաւ, որպէս  
թէ կը զննէր մանր անոր վիճակը, և որչափ  
նայեցաւ անոր, այնչափ աւելի շարժեցաւ ի  
գուրթ:

Ճէսիգա քարոզչին կարեկցութեան նշան-  
ներէն քաջալերուեցաւ, և երբ քարոզիչն ըսաւ  
անոր, “Մօտ եկու, աղջիկս,” իսկոյն զնայ,  
և ձեռուրները կուրծքին վրայ կեցաւ:

—“Մնունդ ի՞նչ է:”

—“Ճէսիգա է, աէր իմ:”

—“Ի՞նչ գեղեցիկ անուն:”

—“Մայրս այս անուամբ կը խաղար թատ-  
րոնը, ուստի այս անունը տրուեցաւ նաև ինձ:  
Դուք քարոզիչ եք:”



—“Ս.յո՛ւ.”

—“Պաշտօնեա՞ն էք հոս :”

—“Ս.յո՛ւ :”

—“Որո՞ւ պաշտօնեան էք :”

—“Սատուծոյ և մարդոց, նաև քո :”

Ճէսիգա սենեկին զարգարուն պատերուն , քարոզչին երկու աղջկան գեղեցիկ հանդերձներուն և իւր ցնցոտիներուն նայելով , որպէս թէ կը մտէր , իւր պատուած հանդերձին օձիքը պնդով իրարու վրայ բերաւ ժպտելով : Անոր ժպտելէն քարոզչին ևս աւելի ի դուր շարժեցաւ , այնպէս որ արտասուք եկաւ աչքէն : Բայց ճէսիգա յառաջ տանելով խօսքը , հարցուց , “Սատուած ո՞վ է . երբ մայրս ինծի անէծք կու տար , երբեմն կը յիշէր այս անունը , բայց թէ ինչ ըսել կ’ուզեր , չեմ գիտեր : Դուք գիտէք թէ ո՞վ է Սատուած :” Քարոզիչը պատասխան պիտի տար , մինչ Դանիէլ սենեակը մտաւ : Թէպէտ հանդարտ դիմօք մտաւ ներս , երբ սեսաւ զճէսիգա , պապանձեցաւ , երեսը դեղնեցաւ , և ապշած՝ մերթ քարոզչին կը նայէր , և մերթ ճէսիգայի : Քարոզիչը դառնալով ճէսիգայի ըսաւ . “Աղջիկս , բեմին քով պարապ տեղ մը կայ , հոն նստէ , եթէ հանդարտ նստիս և մտիկ ընես , բաւական բան կը ըսես Սատուծոյ վրայ :” Յետոյ Դանիէլի դառնալով ըսաւ . “Ս.ս այս աղջիկը , և տեղ մը



ցուցուր անոր բեմին քով, հոն թող նստի :”  
 Գանիէլ իսկոյն հնազանդելով քարոզչին հրա-  
 մանին, տեղ մը ցուցուց բեմին քով ճէսի-  
 գայի : ճէսիգա այն տեղէն կրնար հարուստ և  
 գեղեցիկ հագուած տիկիներուն նայիլ, բայց  
 երբ քարոզիչն սկսաւ պաշտօնը, իւր մտադ-  
 րութիւնը տուաւ անոր : Եւ թէպէտ շատ քիչ  
 բան կարող եղաւ հասկնալ, սակայն քարոզչին  
 քաղցր ձայնը, և գութը որ անոր երեսին վրայ  
 կը տեսնուէր, այնպէս հաճելի թուեցան այս  
 աղքատ աղջկան, որ Գանիելի դժգոհութեան  
 և բարկութեան համար այլ ևս հոգ չըրաւ,  
 քանզի, ինչպէս ըսինք, բոլոր մտադրութիւնը  
 տուած էր հասկնալու թէ ի՛նչ է քարոզիչ և  
 ի՛նչ է Աստուած :

### ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

ՃԵՍԻԳԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ

Երբ պաշտօնն աւարտեցաւ, քարոզիչը իւր  
 աղջիկներուն հետ, նաև զճէսիգա մէկտեղ  
 առնելով, գնաց իւր սենեակը : Հոն քիչ մը  
 նստելով հանգչելէն ետքը աղօթեց այսպէս .  
 «Ով Տէր, սորվեցուր ինձ հովուել քու հօտիգ  
 այս գառնուկները, օգնէ ինձ և զօրացուր զիս»

որպէս զի կարենամ պարտականութիւններս կատարել:” Յետոյ աղջիկները քովը կայնեցունելով, “Որդեակներ,” ըսաւ, “զՍտուած ճանչնալ դիւրին չէ, դիտենք սակայն թէ, Ստուած մեր Հայրն է, ինչպէս նաև քուկդ. ճէսիգա՛. մեզ ամենքս աւելի կը սիրէ, կը հոգայ, կը խնամէ քան ես իմ զաւակներս:” Երբ զայս լսեց ճէսիգա, “Ո՛հ, ես հայր չունիմ,” ըսաւ: Քարողիչն յառաջ տանելով իւր խօսքը, “Ստուած քու Հայրդ է,” ըսաւ, “և որովհետև ամենագէտ է, դիտէ մարդիկ խորհուրդները: Թէպէտ մենք մարմնոյ աչօք չենք տեսներ զՆա, երբ աղօթք կը մատուցանենք անոր, կը լսէ մեր ձայնը: Նաև ունինք արտօնութիւն խնդրել Սնկէ մեր պիտոյքը:” Սնատեն ճէսիգա իւր հին հանդերձներուն և բոկ ոտքին նայելով, “Արդեօք,” ըսաւ, “ինչպէս կը լսէ մարդը հագուած գեղեցիկ տղոց աղօթքը, իմ աղօթքս ալ այնպէս կը լսէ:” “Այո՛,” ըսաւ քարողիչը, “հիմա անգամ, եթէ խնդրես ինչ բանի որ կարօտ ես, կը լսէ:” ճէսիգա աչքը սենեկին չորս կողմը պարտացունելէն ետքը, որպէս թէ կը փնտռէր զՍտուած, դոցեց աչուրները և աղօթեց այսպէս. “Ո՛վ Ստուած, կը բաղձամ ճանչնալ զքեզ. եթէ կը հաճիս, աուր սուրճերուն փոխարէնը զոր Դանիէլ ինձ տուած է:” Քարողիչն ի խորոց սրտէ, “Ամէն,”

ըսաւ ճէսիգայի այս առաջին աղօթքին: Նաև անոր աղջիկները զարմանօք կը նայէին ճէսիգայի երեսը:

## ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԴԺՈՒԱՐԻՆ ԽՆԴԻՐՔ

Դանիէլ պաշտօնէն ետքը պատեհութիւն չգտաւ ճէսիգայի բան մը ըսելու, սակայն չը դիտնալով քարողիչին հրամանը, միտքը դրաւ պատուիրել աղջկան խստիւ ուրիշ անգամ չգալ եկեղեցին՝ սպառնալով ոստիկանին մատնել զնա եթէ գար: Բայց երբ ճէսիգա սրճարան եկաւ հետևեալ օրն ըստ սովորութեան, Դանիէլ բան մը չըսաւ անոր: Աղջիկը սկսաւ խօսիլ այսպէս.

—“Դանիէլ, Ստուած սուրճին փոխարէնը տուա՛ւ:”

—“Ի՞նչ, ո՞վ, Ստուած փոխարէնը տուա՛ւ, ի՞նչ կ'ըսես: Ոչ, չտուաւ:”

—“Բայց մի վախնար, կու տայ. ես շատ անգամ խնդրեցի անկէ. և քարողիչն ըսաւ թէ ինչ որ խնդրենք Ստուածմէ, կու տայ մեզի:”

—“Ճէսիգա՛, քարողիչին ըսի՛ր որ ես սրճարան ունիմ:”

—“Ոչ, բայց կիրակի օրուքնէ հետէ շատ անգամ ըսի Աստուծոյ, և Աստուած պիտի տայ քեզ փոխարէնը:”

—“Ճէսիգա, դուն հլու աղջիկ ես, խօսքս կը բռնես. մարդու չըսես որ ես սրճարան ունիմ, վասն զի մեր եկեղեցւոյն ժողովուրդը հարուստ և պատուաւոր մարդիկ են, թերևս սուրճ եփել և վաճառելը ստորին և անարդ գործ համարելով, զիս պաշտօնէս հանեն:”

—“Եթէ այդպէս է, ինչո՞ւ համար կ'ընես այդ գործը:”

—“Կը տեսնե՞ս այս ստակները, ես այս գործով շատ ստակ կը շահիմ տարին:”

—“Բայց ինչո՞ւ համար կ'ուզես ստակ շահիլ: Շահէ՞ր Աստուծոյ կու տա՞ս:” Դանիէլ դարձեալ խորին մտածութեան մէջ ինկաւ, և մտքէն սա հարցումները կ'ընէր. “Մտուղիւ, ինչո՞ւ համար ստակ շահիլ կը բաղձամ, ինչո՞ւ համար կ'աշխատիմ, մարդ չունիմ, սենեակս այնչափ ստակ ժողովուած կը մնայ. ի՞նչ օգուտ պիտի ընէ. երբէք մարդու բան մը տուած եմ, աւելորդ սուրճէն միայն քիչ մը բան տուի ճէսիգայի, և նա կ'աղօթէ որ Աստուած տայ ինձ փոխարէնը:” Այսպէս խորհելով հանեց բէննի մը որ իբր քսան փարա կ'ընէ, և ճէսիգայի ափը դրաւ, իսկ ճէսիգա մերժեց ըսելով, “Ոչ, ոչ, ես քեռնէ ստակ չեմ ուզեր.”

կ'ուզեմ որ Աստուած քու բարեացը փոխարէնը հատուցանէ քեզ:”

—“Այո՛, կը հատուցանէ. Աստուած հաշուոյ օր մը սահմանած է, գիտեմ:”

—“Այդպէ՞ս է, Աստուած հաշուոյ օր ունի՞ երբ ես թատրոնը կը խաղայի, կը սպասէի հաշուոյ օրուան, և երբ այն օրը կու գար, կ'ուրախանայի:”

—“Բայց կարծեմ թէ Աստուծոյ հաշուոյ օրուան ուրախութեամբ սպասող շատ քիչ կայ:”

—“Բայց դուն այն օրուան ուրախութեամբ կը սպասես, այնպէս չէ՞:”

Դանիէլ գիտնալով թէ այնպէս չէր, պատասխան չտուաւ: Անոր խիղճն արթնցաւ և զգաց որ հաշուոյ այն մեծ օրը պիտի չկրնար ուրախ ըլլալ:

Երբ ճէսիգա կը մեկնէր, ըսաւ Դանիէլի. “Դանիէլ, եթէ կը հաճիս, վաղը կու գամ, և այս ստակով զոր տուիր ինձ, իբրև յաճախորդ սուրճ կը խմեմ: Նաև վստահ եղիր որ գալ կիրակի քարոզչին սուրճի վերաբերեալ խօսք չեմ ընէր:” Այս ըսաւ և ստակն առնելով զնաց ուրախութեամբ:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՆՍԿԵԿԱԼ ՀԻՒՐ ՄԸ


Երբ ձէսիգա իւր թաղը հասաւ, տեսաւ որ քարոզիչը բազմութեան մէջ կը կենար. իսկոյն գնաց, բարև տուաւ անոր: «Սղջիկա, քու տունդ պիտի դամ», ըսաւ քարոզիչը: ձէսիգա անոր հետ գնաց, և ախոռի մը վրած սանդղէն վեր հանելով, հին սենեակ մը տարաւ գնա: Սյս սենեկին մէջ ախոռ կամ նստարան չկար, այլ աղիւսներու վրայ դըրուած տախտակ մը՝ նստելու համար: Քարոզիչը նստաւ տախտակին վրայ, և ձէսիգա՝ գետինը, և սկսան խօսիլ այսպէս.

«ձէսիգա, այն է ձեր տունը:»

—«Սյո՛, տէր, հիմա հոս կը նստինք, ասկէ առաջ մինչ թատրոնը կը խաղայինք, քան զսալաւոյն էր մեր բնակարանը: Եթէ մեծնամք և աղէկ խաղալ սորվիմք, թերևս դարձեալ աղէկ տուն մը կ'ունենանք:»

—«Սղջիկա, դըրեղ աղէկ դպրոց մը դնելու համար մօրմէդ հրամանն առնելու եկայ: Ի՞նչ կը կարծես, մայրդ կը հաճի:»

—«Չեմ կարծեր. մայրս չուզեր զրկել զիս, ո՛չ դպրոց և ոչ եկեղեցի, քանզի կը կարծէ թէ դպրոց և եկեղեցի երթալ արդեւք են



Թատրոնի խաղերն աղէկ սորվելու : Մայրս չգիտեր որ ես եկեղեցի կ'երթամ , քանզի կիրակի օրերը զինովցած կը պառկի , և ես առիթ գտնելով կ'երթամ եկեղեցի :” Այս խօսքերը մօրմէն գանդատելու մտօք չէր ըսեր , այլ կ'ուզէր իրը հասկցունել :

—“Հիմա ի՞նչ կրնամ ընել քեզի համար , ճէսիգա :”

—“Տէր իմ , բան մը չես կրնար ընել , միայն եթէ թոյլ տաս ինծի գալ կիրակի օրերը եկեղեցիդ , և Աստուծոյ վրայ տեղեկութիւն տաս ինծի , շատ շնորհակալ կ'ըլլամ : Եթէ քու աղջիկներուդ հանդերձներուն պէս մաքուր և գեղեցիկ հանդերձներ տաս ինծի , մայրս կ'առնու հանդերձները , կը ծախէ և օղիի կու տայ : Այո՛ , բան մը չես կրնար ընել :”

—“Մայրդ ո՞ւր է :”

—“Իմելու գնաց , և քանի մը օր ետքը կու գայ տուն , եթէ հոս ըլլայ , զձեզ մտիկ չընէր : Մնցեալները մէկը եկաւ հոս անոր խրատ տալու . մայրս սանդղէն վար մկեց զնա : Թատրոնին մէջ մայրս “կուռարար” կ'անուանեն , և ոչ ոք կը համարձակի անոր բան մը ըսել :”

Քարոզիչը դարձեալ քիչ մը խորհելէն ետքը , ըսաւ , —

«Ճէսիգա, ո՞վ է այն մարդը զոր Դանիէլ կը կոչես:» Ճէսիգա վարանելով պատասխանեց. «Տէր իմ, բարեկամ է, երբեմն սուրճ և հաց կուտայ ինձ: Հարկաւ դուք լսնտոնի բոլոր մարդիկ չէք ճանչնար:»

—«Այո՛, չեմ ճանչնար, բայց այդ բարեկամը սրճարան ունի, և դաւաթ մը սուրճի համար քանի՞ բէննի կ'առնու:»

—«Մեծ դաւաթներու համար՝ մէկ բէննի, փոքրերու համար՝ կէս բէննի. նաև շօթ կրնայ առնուիլ մինչև կէս բէննի:»

—«Մղէկ սուրճ և աղէկ շօթ, այնպէ՞ս է:»

—«Մղէկ, շատ աղէկ շօթ և սուրճ:» Ճէսիգա, որպէս թէ շօթերուն համը դեռ բերանն էր, շրթունքը լիզելով ըսաւ այս խօսքը: Քարողիչն ըսաւ ճէսիգայի. «Այսուհետև իմ հաշուոյս առ սուրճ և շօթ,» բայց երբ ճէսիգա չհաճեցաւ, «Ուրեմն,» ըսաւ քարողիչը, «ամէն կիրակի շիլին մը (12 բէննի) կուտամ քեզի, և առաջին անգամ որ սրճարանը կ'երթաս, սուր զայն սրճարանին տիրոջը.» և հայեցուածով հասկցուց թէ պիտի խմանար եթէ ճէսիգա չտար այն ստակը սուրճի համար, բայց յետոյ մեղմ և քաղցր հայեցուածով ըսաւ.

—«Ուրիշ բան կ'ուզե՞ս:»

—«Ոչ, տէր իմ, բան չեմ ուզեր, միայն Աստուծոյ վրայ տեղեկութիւն:»

—«Շատ աղէկ, Աստուծոյ վրայ հիմա քեզի սա միայն կ'ըսեմ. եթէ զքեզ տունս առնում և զաւակ ընեմ ինձ իմ աղջիկներուս պէս, նախ պէտք է որ լուանալ տամ զքեզ և մաքուր հանդերձներ հագցունեմ, այնպէս չէ՞ Սրբ, Աստուած կ'ուզէ զմեզ երկինք առնուլ իրեն քով, բայց մենք որ մեղօք աղտեղեակ ենք՝ ամենեին չենք արժանի:»

Ուստի Աստուած, որպէս զի զմեզ մաքրէ մեղքէ, մեզի արդարութեան հանդերձ հագցունէ, և այսպէս պատրաստէ զմեզ երկնային օթեանաց, իւր Որդին ղրկեց յաշխարհ: Ապա երբ բան մը կը խնդրես Աստուծմէ, պարտիս փրիստոս Յիսուսի անուամբ խնդրել, քանզի Յիսուս է Աստուծոյ որդին:»

Քարողիչն այս խօսքը ըսելէն ետքը, երբ կ'ուզէր երթալ, ճէսիգա գնաց անոր հետ մինչև մեծ փողոցը, և քարողիչն ըսելով, «Աստուած օրհնէ զքեզ,» կէս շիլին տուաւ անոր, և ճէսիգա դարձաւ իւր դժուժ բնակարանը:

Հետեւալ անաւօտուն ճէսիգա Դանիէլի սրճարանը երթալով, իբրև յաճախորդ համարձակութեամբ հաց և սուրճ առաւ ստակով, և նախընթաց առուր դէպքը պատմեց անոր: Դանիէլ տարակուսանաց մէջ մնաց, բայց կ'ըսէր մտքէն. «Եթէ եկեղեցւոյն հողաբարձուներն իմանալով թէ սրճարան ունիմ զիս

պաշտօնէս հանել ուզեն, կը համոզեմ զանոնք խոստանալով սրճարանը թողուլ," այսպէս խորհելով փարատեց իւր տագնապը :

### ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՃԵՍԻԳԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԻՆ ՊԱՏԱՄԻԱՆԸ

Ս.յսպէս թշուառ ճէսիգա ամէն կիրակի երեկոյ եկեղեցին կ'երթար բոկ և առանց քողոյ կամ գլխարկի : Բայց ժողովատեղին մըտնելէն առաջ, Գանիելի սենեակը կ'երթար, և հոն կը հազնէր վերարկուն զոր քարոզչին աղջիկները տուած էին անոր, և կը դնէր գըլխարկը զոր նոյնպէս անոնցմէ տուած էր, ապա կ'երթար կը նստէր բեմին քով . քարոզը և աղօթքը մտիկ կ'ընէր ուշադրութեամբ, և պաշտօնէն ետքը քարոզչէն համառօտ խրատ մը և շիլին մը առնելով կը մեկնէր :

Քանի մը շաբաթ ետքը, օր մը քարոզիչը եռանդեամբ և փափաքանօք մտիկ ընող այս աղքատ աղջիկը չտեսաւ ժողովին մէջ : Դանիել ևս տեսնելով որ աղջիկը յաջորդ օրը չեկաւ սրճարան հաց և սուրճ առնելու, թէև հոգ ըրաւ, բայց անոր վրայ բան մը չըսաւ ուրիշի, և ոչ ուզեց ճէսիգայի տունը հարցունել, այլ «ինձի ի՞նչ փոյթ», ըսելով՝ ջանաց իւր խիղճը հանդարտեցունել, և տուն գնաց :

Ս.յն գիշերը համբերով իւր ստակը ուրախութեամբ տեսաւ որ ունէր աւելի քան հինգ հարիւր լիրա, և հասկցաւ թէ ստակն օր քան զօր կ'աւելնար : Ս.յն շաբաթ այս կերպով անցաւ : Երբ ճէսիգա չերեցաւ նաև յաջորդ կիրակին, թէ քարոզիչը և թէ Գանիել զարմացան :

Պաշտօնէն ետքը քարոզիչը երթալով սենեակը կը հանգչէր, Գանիել դուռը զարկաւ, և երբ ներսէն հրաման տրուեցաւ, դուռը բանալով մտաւ . «Տէր իմ», ըսաւ քարոզչին, «աղքատ աղջիկը չեկաւ, հոգ կ'ընեմ անոր համար, կ'ուզեմ երթալ գտնել զնա, բայց տունը չեմ գիտեր : Դուք կարծեմ գիտէք, քանզի անգամ մը գացիք հոն :» Քարոզիչն յայտնեց անոր թաղը և տունը ուր կը բնակէր ճէսիգա, և ըսաւ . «Սղէկ կ'ընես, Դանիել, նաև ես կ'սկածի մէջ եմ, ուզեցի երթալ, սակայն այսօր գործերս շատ են, ժամանակ չունիմ :» «Ես կ'երթամ», ըսաւ Դանիել, և եկեղեցի իջնելով՝ կանթեղները մարեց, գործերը կարգի դրաւ, և ըստ բանի քարոզչին, գնաց ճէսիգայի թաղը :

Գանիել մինչ կ'երթար, մեծ հոգի մէջ էր ճէսիգայի համար, վասն զի վերջին անգամ շատ տժգոյն և նիհար տեսած էր զնա . Դանիել ջանաց այս խորհուրդը մաքէն հանել, բայց չկրցաւ :

Երբ հասաւ ճէսիգայի թաղը, մութ փողոցներէ անցնելով մտաւ ախոռը, և սանդղէն ելլելով կեցաւ սենեկին դրան առջև: Դերսը մութ էր, ձայն չկար, և ոչ ոք ըսաւ. «Մտիր.» ուստի կ'ըսէր մաքէն, «Մանեմ ներս թէ թողում երթամ:» Մինչ այսպէս կը վարանէր Գանիէլ, լսեց որ մէկը ներսը սա աղօթքը կ'ընէր, «Ո՛վ երկնաւոր Հայր, դուն ինձ մէկը զրկէ, Յիսուսի անուան և սիրոյն համար:»

Գանիէլ ձայն տուաւ դուրսէն ըսելով, «Ահա եկայ, ի՞նչ կ'ուզես,» և վառելով մոմի մը ծայրը զոր իրեն քով ունէր՝ ներս նայեցաւ և տեսաւ որ ճէսիգա գրեթէ մահուան մօտ, գեղնած, փոխանակ վերմակի վրան հին կապերտով պառկած էր յարգի դէզի մը վրայ: Երբ ճէսիգա տեսաւ զԳանիէլ, ժպտելով ըսաւ. «Ազնիւ Գանիէլ, դու ես, Աստուած զրկեց զքեզ:» Գանիէլ նստաւ աղջկան յարդէ անկողնոյն քով, և անոր նիհար ձեռուրներն առնելով իւր ձեռաց մէջ՝ ըսաւ, «Այո՛, Աստուած զրկեց զիս:»

—«Աստուած ի՞նչ ըսաւ քեզի, Գանիէլ,» հարցուց ճէսիգա: «Աստուած» պատասխանեց Գանիէլ, «ըսաւ ինձի. «Ո՛վ մեղաւոր, ես զրկեցի քեզի ողորմելի, աղքատ, անօգնական և անտէր աղջիկ մը որ անոր բարիք ընես, բայց դուն աւելի սիրեցիր քու ստակ-

ներդ քան թէ այն տառապեալ աղջիկը, և չուզեցիր օգնել անոր. եթէ այս գիշեր հոգիդ քենէ պահանջեմ, այն ստակները որ ժողված ես, որո՞ւ պիտի ըլլան:» Այս լսելով պապանձեցայ, քանզի տեսայ թէ Աստուած եկած էր ինէ հաշիւ պահանջել:»

—«Դուն աղէկ մարդ չե՞ս:»

—«Ոչ, ես մեղաւոր եմ. միշտ կ'երթամ Աստուծոյ տունը, բայց ստակի համար, և եթէ համեստ և աշխատասէր եմ, իմ շահուս համար է. և հիմա՝ Աստուած նայելով իմ սրտիս, կը կոչէ զիս Անմիտ, Յիմար: Դուն, ճէսիգա, երկնից համար աւելի պատրաստութիւն ունիս, մինչ ես ամենևին չունիմ:»

—«Եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ համար Աստուծոյ չես աղաչեր որ Յիսուսի սիրոյն համար բարի մարդ ընէ զքեզ:»

—«Վասն զի չեմ կրնար ընել այդպէս. շատ անգամ կ'իրակի օրերը, երբ քարոզիչն աղօթք կ'ընէ, ծուներ կը դնեմ, որպէս թէ կ'աղօթեմ, բայց խորհուրդս միշտ աղօթքի եկող հարուստներուն երջանկութեան վրայ է: Ստակը սիրած եմ այնչափ, որ թերևս ուզէի քու մահդ մանաւանդ քան թէ քիչ մը ստակ ծախք ընել: Ո՛հ, ինչ թշուառ մեղաւոր եմ:»

—«Չե՞ս գիտեր սա խօսքը զոր քարոզիչը կարգաց Սուրբ գիրքէն. «Աստուած այնչափ

սիրեց զաշխարհ, որ մինչև իւր միածին Որդին տուաւ, որ ամէն ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ։”

— «Դ՞նչպէս չեմ գիտեր, շատ անգամ լսած եմ, և լսելով լսելով սիրտս կարծրացած է։ Երբ այն խօսքը լսեցի առաջին անգամ, շատ սիրեցի, բայց հիմա այն խօսքը բնաւ ազդեցութիւն չընեց ինձի։”

Ճէսիգա երբ լսեց զայս, իւր ձեռուրները բերաւ կուրծքին վրայ, աշուրները գոցեց, և տենդին սաստկութենէն տոչորեալ շրթամբ ըրաւ սա աղօթքը. «Ո՛վ Տէր, շնորհք ըրէ, Դանիելի սիրտը կակղացուր վասն սիրոյն Յիսուսի. Ամէն Թ”

Երբ այս ըսաւ, բաւական ժամանակ երկուքն ալ լուռ կեցան։ Յետոյ Դանիել հանեց վերարկուն, և երբ անով կը ծածկէր հիւանդ աղջիկը, յիշեց Սուրբ գիրքին սա խօսքը, «Որովհետև այս իմ եղբայրներուս պինդ պըղտիկներէն մէկուն ըրիք, ինձ ըրիք։” Այսպէս հիւանդ աղջկան խնամ տանելու առթիւ, կակղացաւ Դանիելի սիրտը, և ըսելով, «Աստուած, ողորմէ ինձ մեղաւորիս,» սիրով դարձաւ իւր Փրկչին Յիսուսի։

## ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ՍՏՈՒԵՐ ՄԱՀՈՒ

Դանիել այն գիշեր հիւանդին քով մնաց, և առաւօտուն սրճարան չերթալով, երբ դրացիներէն ստուգեց թէ ճէսիգայի մայրը փախած էր, կառք մը բռնեց և իւր սենեակը տարաւ հիւանդը։ Հոն բժիշկ մը կանչելով պատուրեց անոր ամեն միջոց գործածել աղքատ աղջիկն առողջացնելու, յետոյ նամակ գրեց քարոզչին այսպէս.

Տէր իմ,

Եթէ ժամանակ ունիք բնակարանս գալու, հոս կը գտնէք ճէսիգա։ Մահացու տենդէ մը բռնուած գտնելով զնա, տունս բերի։ Հիմա հիւանդը նայելու զբաղած եմ, և չեմ կրնար ձեզի գալ։ Ողջ լերուք,

Դանիէլ Սնորհիւ։

Քարոզչին առնելով այս նամակը, թողուց ամէն գործ և զնաց Դանիելի տունը։ Երբ դուռնէն ներս մտաւ, նախ տեսաւ ճէսիգայի նիհար և տենդին սաստկութենէն դեղնած երեսը։ Իսկ Դանիել աղջկան քով նստած էր, և իւր հաշիւները կը քննէր։ Ճէսիգա երբ իմացաւ քարոզչին գալը, կարմրեցաւ. «Բարեւ

եկիք տէր իմ,» ըսաւ, «Հայրն Աստուած տըւաւ ինչ որ խնդրեցի, միայն Դանիելի սուրճին և շօթերուն փոխարէնը չտուաւ:» Դանիէլ իսկոյն պատասխանեց. «Ոչ, փոխարէնը հազար անգամ տուաւ, քանի մը գաւաթ սուրճի փոխարէն, հոգիս պարգևեց ինձ: Շատ տարիներէ հետէ պաշտօնի և աղօթից կը յաճախէի և ամէն մարդ զիս հաւատացեալ կը կարծէր, բայց ես կորուսեալ էի հողուով:» Քարողիչը լսելով զայս ըսաւ. «Ես ալ զքեզ հաւատացեալ կը կարծէի:» Դանիէլ պատասխանեց, «Այո՛, այնպէս է. նաև ուրիշ խօսք մը պիտի ըսեմ. տասը տարի է որ սրճարան ունիմ, և որովհետև մեր ժողովուրդը հարուստ և պատուաւոր է, չուղեցի յայտնել այս գործը, որ գուցէ եկեղեցւոյ սպասաւորութենէն հանուիմ: Ես կու տայի նաև ձէսիգայի սուրճ և հաց:»

«Դանիէլ, այս ամէնալու բան մը չէ,» ըսաւ քարողիչը:

—«Այո՛, տէր իմ, զիտեմ, բայց երբ այս աղջիկը սուրճ խմելու համար սրճարանս կու գար, շատ անգամ կ'ընէր սա հարցումները, «Դանիէլ, կը սիրե՞ս զՅիսուս. ուրա՞խ ես որ Աստուած քու Հայրդ է: Դանիէլ, որչափ յառաջ կ'երթանք, այնչափ կը մօտենանք արքայութեան, այնպէս չէ՞. բոլոր ստակդ կու

տա՞ն Աստուծոյ:» Այս վերջին հարցումը զիս շատ անհանդիստ կ'ընէր: Ահա՛ մինչ հոս նրատած եմ հիւանդին քով, դարձեալ կը համբէի ստակս. ունիմ իբր 500 լիրա:

Աղօթք ըրի Աստուծոյ, ըսելով. «Այս աղջիկը մի առնուր, բոլոր այս ստակը կը նուիրեմ քեզ:» Ճէսիգա Դանիելի այս խօսքը լսելով քիչ մը ոգի առաւ, և տկար ձայնիւ աղօթեց այսպէս. «Ո՛վ Հայր որ յերկինս ես, խնդրեցի քենէ որ զիս երկնային օթեանդ ընդունիս, բայց եթէ աշխարհի վրայ մնալով կրնամ Դանիելի օգուտ մը ընել, շնորհէ ինձ ժամանակ մը ևս մնալ հոս, Յիսուսի անուան համար, Ամէն:» Աղօթքէն ետքը երկուքն ալ կարող չեղան խօսիլ, և ստեն մը լուռ կեցան իրենց աչուրները գոց: Յետոյ քարողիչն աչքը վերցունելով ճէսիգայի երեսը նայեցաւ, և տեսաւ որ նեղութեան և տագնապի նշաններն անցած էին, և դէմքին վրայ հանդարտութիւն կար: Քարողիչը զիտնալով թէ մահուան մօտ այսպէս կ'ըլլայ երբեմն, կարծեց թէ մահուան քուն էր այն, բայց բռնելով հիւանդին ձեռուրները, տեսաւ որ տաք էին և երակը հանդարտ կը զարնէր, ուստի դարձաւ Դանիելի և ըսաւ. «Աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ:» Եւ արդարև ճէսիգա այն ժամանակէն սկսաւ արագ արագ առողջութիւն գտնել: Եւ

Գանձի էլ ամենայն շնորհակալութեամբ որդե-  
 գիր ըրաւ զնա իրեն : Երբ ճէսիգա առողջա-  
 ցաւ , սկսաւ իւր ծերունի հօրը օգնել այլ և այլ  
 գործերու մէջ : Բայց անոր առաւել սիրելի  
 գործն էր աւել զեկեղեցին , մարբել բեմին  
 փոշիները և երեկոյեան կանթեղները վառել :  
 Կիրակնօրեայ պաշտաման կը գանուէր միշտ ,  
 և երբ պաշտօնեայն կենաց խօսքը կը քարո-  
 զէր , սա մեծ ուրախութիւնն ունէր որ , եթէ  
 ոչ այլք , գէթ ճէսիգա ուշադրութեամբ մտիկ  
 կ'ընէր քարոզը : Քարոզիչը կը զգար թէ խօսքը  
 զոր կը քարոզէր՝ հոտ էր մահուանէ ի կեանս ,  
 և շատ անգամ կը յիշէր ճէսիգայի առաջին  
 գալուստը և առաջին աղօթքը :



*[Faint, illegible handwritten text]*